



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5  
21.190

Գ. ՏԵՐ-ՌՈՒԲՐԻՆԵԱԿՑ

2000

ՌՈՍԱԿԱ ՎԱՐՆԵՐ  
ՖԻԼԱԿԱՌԻԿԱՅԻՆ

ԵԶՄԻԱԾԻԿ  
1914

6.  
E

5  
\$ 21.190

Գ. ՏԵՐ ԲՈՒԲԻԼԵԱՆՑ


1/24

# ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՔԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

(Հայ տուրիստի դիտողութիւններ)



Արտատպուած ինն «Արարատ» ամսագրի մայիս եւ յունիս  
1914 թ. համարներից



ԷԶՄԻԱԾԻՆ

Երեքարաշարժ Տպարան Մայր Աթոռոյ

1914

206.5  
S-51

5-51

Գ. ՏԷՐ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

# ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

(Հայ տուրքի գիտողութիւններ)



Արտատպուած ին «Արարատ» ամսագրի մայիս եւ յունիս  
1914 թ. համարներից

ԷԶՄԻԱԾԻՆ

Երեքարաշարժ Տպարան Մայր Աթոռոյ

1914



# ՄԻՋՊԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանի Գրադարանի Կենտրոն

Հայաստանի Գրադարանի Կենտրոն



92-99

(9641-91)

Հայաստանի Գրադարանի Կենտրոն

## ՌԻՍՏԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԱՆՍԻՍԻՆ

(Հայ տուրիստի դիտարկումներ)

Նուիրում է պրոֆեսոր Վ. Լարդանեանին, որ նպատակ է ունենում հրատարակել «Հայ տուրիստի դիտարկումներ» գրքի առաջին դրույթը, որի մեջ ներկայացված է հայ տուրիստի դիտարկումները 1913 թվականից սկսած մինչև 1918 թվականը։

### Ա.

1913 թվականի մայիսի վերջին ինձ յաջողուցից երկրորդ անգամ այցելելի զրանիտի և լճերի վրայ պահպանուող ինքնավար ծայրագաւառը.— Ֆինլանդիան ինձ շատ էր հետաքրքրում, և ես ամեն առիթից օգտվում էի, երբ լինում էին արձակուրդներ, հեռանալու Պետերբուրգից դէպի հիւսիս, դէպի աւստիոմ Ֆինլանդիան՝ նրան մօտիկից ճանաչելու և իմ հայրենիքս երագեցու.— Ռուսաստանի մայրաքաղաքի ժխորի մէջ անհնար է այդ, իսկ առանց զրան անրովանդակ է իմ մտածողութիւնը։

Այս շարագրութիւնս չի լինի նուիրուած ամբողջապէս Ֆինլանդիային. ես այստեղ կը խօսեմ միայն օրթողըս երկու մենաստանների՝ Կօնկեցի-ի և Վալաամի մասին։ Յիշուած երկու մենաստաններն էլ գտնվում են առանձին կղզեակների վրայ, որոնք կրում են մենաստանների անունը։ Լադոժեան լճի հիւսիս-արևմտեան մասում, ափին մօտիկ, Ֆինլանդիայի սահմաններում ջրուած են շատ մանր կղզիներ, որոնցից մի քանիսի վրայ ջերմեռանդ հաւատացեալները մատուռներ և վանքեր են կանգնեցրել, իսկ երկուսի վրայ կան մեծ, բազմամարդ մենաստաններ—Կօնկեցի և Վալաամ. սրանք պատկանում են Վերորդի նահանգին։ Ես կտամ յունադաւան այս երկու ուսական վանքերի նկարագիրը, հետու փնայով պատմութիւնից և ընթերցողներին ըստ կարելու յստակօրէն պատկերացնելով ինձ։

### Բ.

Պետերբուրգից Կօնկեցի և Վալաամ կարելի է գնալ երկու ճանապարհով. մէկը՝ երկաթուղով Վերորդի և Սերտօբօլի վրայով, իսկ միւսը՝ չղփնաւով Նեայի վրայով, Շիստեյբուրգի մօտով ևս ընտ-

րում եմ վերջինը, որ նոր էր բացուել—(ձմեռը նաւագնացութիւնը դադարում է). մայիսի 18-ին սառոյցից հազիւ էր ազատուել Նեան և Լադոսեան լիճը, և շոգենաւը պէտք է անէր իւր առաջին սէյրը:

Կալաշնիկովի գետափում, ս. Բորիս և Գլէրի եկեղեցու սօտ գտնուում է Վալաասի նաւահանգիստը—գերանների մի հիւսուածք, շոգենաւի մի դիւրաշարժ կայան: Առաւօտեան ժամը 10-ն է. մէկ ժամ յետոյ մեկնելու է շոգենաւը. նաւահանգիստ են լցուել բազմաթիւ ուխտաւորներ և սրանց ճանապարհողներ. նրանք զլիսարաց շարուել են նաւահանգստի կենդրոնում կանգնեցրուած պատկերի առաջ, որ վառուած մոմերի մէջ անտեսանելի է դառել. մի վանական բարձրաձայն աղօթք է կարդում—նաւագնացութեան բացման առթիւ մաղթանք են կատարում, գոհունակութիւն են յայտնում Արարչին: Ես մօտենում եմ կասսային, սեաներ վանականը տալիս է տոմսակ և հետն էլ Վալաասի համառօտ նկարագիրը: Երեք անգամ սուլելուց յետոյ շոգենաւը բաժանվում է նաւահանգստից. սկզբում գնում է քիչ յետ, ապա արագօրէն առաջ է լողում: Բոլոր ուղևորները բարձրացել են մայթի վրայ և հրաժեշտ են տալիս մնացողներին. շատերը թաշկինակներն են ձօժում ու ժպտում. մի խումբ, մեծ մասամբ կանայք, մի վանականի զլխաւորութեամբ ժողովել են մայթի ետեի մասը և Տիրամօր պատկերի առաջ աղօթք են կարդում, անփորձանք տեղ հասնելու և իրենց փափազները կատարելու խնդրանքով.—իսկ մայթի առաջի մասում հինգ-վեց երիտասարդ վանականներ բարձր ձայնով հսգևոր երգեր են երգում. նրանցից մէկը ընկերների մէջ տեղը կանգնած՝ երկու ձեռքով անդադար շարժումներ է անում՝ չափ է տալիս, երևակայելով իրեն խմբապետի դերում—կարճահասակ ձերուների ֆին նաւապետը կանգնել է վերին յարկի իւր սենեակի դռանը և ելքտրական մեքենայի միջոցով անդադար ուղղութիւն է տալիս շոգենաւին և իրօխտ հրամաններ է արձակում ստորագրեալ նաւաստիներին. որոնք բոլորն էլ ֆին են: Ինք դուրս չենք եկել Պետերբուրգից. մահիճները և շոգենակոյկները վխտում են Նեայի վրայ. շատ են և բեռնակիր սե շոգենաւերը, որոնք իրենց ետեից քաշում են մի քանի հսկայական նաւեր, ծանրաբեռնուած փայտով, աղիւսով և այլ ապրանքներով:

Կամաց-կամաց դուրս ենք գալիս մայրաքաղաքից: Նեայի ափերը ստանում են կանաչ գոյն. վերջանում են արուարձաններն ևս և սկսվում են ամառանոցները. նրանց հետ խառը ցրուած են մեծ գործարանները, որոնց ծխնելոյղները ծառների և շինութիւնների միջից ուղղաձիգ բարձրանում են վեր և կարծես չեն վերջանում: Նրանց բերանից դուրս է գալիս թանձր, մութ ծուխը և բազմաթիւ ու բազմապիսի քուլաներով երկինքը միացնում է երկրի հետ: Տեղտեղ գետեղբիւն երևում են շքեղ կառուցուածքներ և նրանց առջևը՝

թեթև նաւահանգիստներ: Մեր շոգենաւը սկսում է արագացնել իւր ընթացքը և առանց երեքալու սահում է կանաչ անտառի զուգահեռական պատնէշի միջով: Գետափը ստանում է անորոշ կերպարանք, թողնում է կանաչ ժապաւէնի տպաւորութիւն և անդադար յետ է վազում և ոչ մի հաճոյք չի պատճառում երկար դիտողին իւր տեսքով: Ես յոգնում եմ այդ անորոշութիւնը դիտելուց և հայեացքս դարձնում եմ շոգենաւի մէջ՝ իմ ուղեկիցներին.—նրանք արդէն տեղաւորուել են նստարանների վրայ. մի մասը մտել է կայուտանները, բաժանուել են խմբերի և զրոյցի են բռնուել: Նաւով երկար ճանապարհ գնալիս շատ հեշտութեամբ ծանօթութիւն կարելի է կապել: Խօսակցութեան պահանջը և հարևանի փիճակով հետաքրքրուելը մի անդիմադրելի ցանկութիւն է, որ ունին բոլոր ասոյջ մարդիկ. միայն որոշ տիպի խստակեաց ճգնաւորներն են, որոնք ուխտել են լուռ ու մունջ անցկացնել իրենց կեանքը և ոչ ոքի ոչ մի խօսք լսելի ձայնով չասել: Մեր նաւում չկան այդպիսի լուսկեացներ: Ահա մէկը մօտենում է ինձ, կեղտոտ շորերով, տանջուած դէմքով ու շատ հին գլխարկով. վայելչութեամբ բարևում է և տեղեկանալով, որ ես էլ եմ գնում Վալաաս, սկսում է պատմել: Պատմում է, թէ ինչպէս ինքը ուխտի է դնացել այդ մենաստանը, մնացել է այնտեղ շաբաթներով, օրինակ է վերցրել վանականների ժուժկալ, առաքինի կենցաղից. մի առ ժամանակ օղին և հարբելը վերացել է. կազուրուել է հոգով. ամբարցել է իւր կամքը, բայց այդ երկար չէ տևել. այժմ նա վերստին ստիպուած է Վալաաս այցելել՝ հոգեպէս հանգստանալու, սրբերի մասունքներին երկրպագելու և վանականների հայրական օրհնութիւնը և բժշկութիւնը առնելու: Շատերն են գնում Վալաաս այս նպատակով: Կօնեկցում և Վալաասում օղի և այլ ոգելից խմիչքներ ու ծխախոտք խստիւ արգելվում են. եթէ մէկի մօտ օղի տեսնեն և կամ նկատեն ծխելիս—իսկոյն դուրս են անում կղզուց և տուգանք վերցնում:

—Ինձ նման բնաւորութեամբ թոյլ մարդկանց համար այդ խստութիւնները օգտակար են, և ես չուտ-չուտ Վալաաս եմ գալիս՝ ինձ մաքրելու և բժշկելու.—ասաց իմ խօսակիցը:

Նա պատմեց ինձ իւր ամբողջ կեանքը յիշեց բոլոր մանրամասնութիւնները՝ իրախոսուած իմ ուշադրութեամբ և հարցերով.—մանր խանութպան է. հօրից ստացել է մեծ ժառանգութիւն. վատնել է. ամուսնացել է մի անգամ, կինը թողել է նրան, տեսնելով որ հարբում է. այժմ քրոջ որդիներն են խանութը կառավարում, իսկ ինքը մենաստաններն է ման գալիս այն յուսով, թէ կը կարողանայ ազատուել ախտից: Խօսում էր այնպիսի մի տոնով, որ կարծես ինձանից էր սպասում իւր ցաւերի բուժումը: Մենք էլի խօսեցինք, ևս հետաքրքրվում էի այս մարդու փիճակով. նա մի



Լադօժեան լիճը, ինչպէս ամեն փակ ջրամբար, չըջանաձև հոսանք ունի և դիւրութեամբ ենթարկւում է մթնոլորտի ազդեցութեան: Եւրոպայի ամենամեծ լիճն է սա, բայց և ամենավտանգաւորը: Յաճախակի փոթորիկների երկիւղից ապրանքատար նաւերը սակաւ են լողում այս լճի վրայ: Ապահով հաղորդակցութեան համար կառուցուած են ջրանցքներ, որոնք զուգրնթաց ձգուում են լճի հարաւային եզրին, սկսուում են Նեայից և շարունակուում են մինչև Վօլխով, այդպիսով Վօլգան միացնում Նեայի հետ. մի քանի տեղ այս ջրանցքները կրկնակի են և ընդհանուր առմամբ մօտ 200 վերստ երկարութիւն ունեն: Այս ջրանցքները նուազեցրին ապրանքատար նաւերի երթևեկութիւնը լճում. Ամառուայ չորս-հինգ ամիսների ընթացքում, երբ լիճը ազատ է սառոյցից, Պետերբուրգ, Վալաաի, Կեկսօլմի և Սերգօբօլի միջև միշտ երթևեկում են մարզատար շոգենաւեր. որոնք օժտուած են նորագոյն բոլոր յարմարութիւններով և պաշտպանուած են հնարաւոր վտանգներից: Մեր շոգենաւը, որ Վալաամ մենաստանի սեփականութիւնն է, ունի անթել հեռագրի յարմարութիւն և ուրիշ նորաձևութիւններ:

Այսօր լիճը համեմատաբար հանգիստ է. կան ալիքներ, բայց դրանք ոչինչ են մեր ծանր շոգենաւի համար: Լճի երեսին, տեղ-տեղ երևում են շարժական փարոսներ, որոնք ուղղութիւն են տալիս նաւերին. կան և կայուն փարոսներ,—բարձր աշտարակներ, կանգնեցրուած լճի միջից ցրուած ժայռերի կամ փոքր կղզիների վրայ: այս մեծ փարոսների մէջ ապրում են հինգ-տասը ֆին պահապաններ, որոնք և պէտք եղած դէպքում օգնութեան են հասնում նաւերին, նրանք իրենց մօտ ունեն անհրաժեշտ պիտոյքներ, նաւակներ պարաններ և այլն, որոնք շարուած են սպիտակ բրգաձև շինութեան մէջ. հետուից այդ շինութիւնը ձեան մեծ բլուրի է նմանում:

Մեր շոգենաւը անդադար հեռանում է ցամաքից և խորը մտնում լճի մէջ. ցամաքը կորչում է մեր հորիզոնից, համասփեւ ջուրն է չըջապատում մեզ: Աչքը ոչինչ չէ տեսնում բացի ջրի հարթ մակերևոյթից... ամեն անգամ, երբ ես ճանապարհորդում եմ ծովով և հարաշարժ ջուրն եմ տեսնում իմ շուրջս, ինձ պատում է մի անբացատրելի զգացում սարսուռի հետ միասին. ինձ թուում է, թէ համատարած այս ջուրը նենգ դաւադրութեամբ գրկախառնուել է երկնքի հետ. և այս երկուսը ներկայացնում են ինձ որպէս մի հսկայական վիշապ, լայն բացած բերանով, անհամար ատամներով և մշտաշարժ լեզուներով... Երբ երկար նայում էի ծովի ալիքներին ու լուում նրանց ազմուկը—ծովը կարծես շունչ էր առնում և անթիւ շրթունքներով իմ ոչնչութիւնը ծաղրում. սարսափելի է այս ծաղրը... Ես անկարող եմ ծովի հեգնանքին պատասխանել, աւելի շատ եմ ընկճուում և ճնշուում. պարզ, անզուրեկան քամի է սկսուում և

ես իջնում եմ ներքև՝ կայուտայում երևակայութիւններս հանգրստացնելու, վախ ազդող մտքերս մոռանալու—ժամը 5-ն է. մի վանակահնի ինչորում ենք մեզ թէյ տալ. (շոգենաւի բուֆէտը վանակահնների ձեռքն է). և միասին ճաշում ենք, ապա քիչ հանգստանում ենք: Ինձ զարթնեցնում են ճանապարհորդների խմբական երգեցողութիւնը. մօտեցել էինք Կոնսեցին, գոհաբանական աղօթք էին կարգում և կրօնական երգեր երգում:

Ե.

Կոնսեց մենք հասանք երեկոյեան ժամը 8-ին. լոյս է. ասպիտակ գիշերներին շրջանն է: Շոգենաւը կանգնում է կղզու մի խոտոյի մէջ. դուրս ենք գալիս նաւահանդիստ. մեզ գիմաւորում են Կոնսեց մենաստանի ներկայացուցիչները և առաջնորդում են դէպի վանական հիւրանոցը. շտապում ենք այնտեղ և երկու սենեակ ենք վերցնում—մէկում տեղաւորուում ենք չորս ուսանողներս, միւսում երեք ուսանողները: Առաջին տպաւորութիւնը շատ լաւ էր. հիւրատանը կատարեալ մաքրութիւն էր. երկյարկանի մի գեղեցիկ շէնք. դռների մօտ կանգնած էին հերթապահ վանականները հայր հիւրընկալի հետ. ինչպէս առաջին յարկում, նոյնպէս և երկրորդ յարկում ընդարձակ կօրբիդօրի ուղղութեամբ ընկած են սենեակները. իւրաքանչիւրի դռան կպցրած է տախտակ և վրան գրած է սենեակի համարը. սենեակները տաք են, դմբեթաձև առաստաղով, մեծ լուսամուտներով. պատերին զուգահեռական շարուած են չորս մահճակալներ. մաքուր և նոր հարթած սաւաններով, հաստ վերմակներով և երկու-երկու փափուկ բարձով. կայ մի սեղան, մի քանի աթոռներ, մի պահարան. Սպիտակ պատերին ամրացրուած են կրօնական պատկերներ, որոնք այնքան տարածուած են և շատ էժան են Ռուսաստանում:

Մենք մի փոքր հանգստանում ենք, դիտելով այս պատկերները. ապա դուրս ենք գալիս կղզին շրջագայելու: Մեզ ընկերանում են և ուսանողուհիները. հիւրատան սպասաւորը խոստանում է սամովարը պատրաստել մեր վերադարձին: Վանականները չեն երևում. մտել են իրենց խցերը. գիշերն է սկսուում. ոչ արև կայ երկնակամարում և ոչ լուսնակ, բայց «ասպիտակ» է գիշերը: Հիւրատան առաջը մի պարտէզ կայ՝ ծառուղիներով և նստարաններով: Հիւրատանը սպասաւորող մի վանական սիրով յանձն է առնում մեզ կղզու նշանաւոր անկիւնները ցոյց տալ: Նախ մտնում ենք մենաստանի բանջարանոցները, ուր հասնում են զանազան տեսակի կանաչներ, և մտնում ենք անտառ. Բարակ և երկար են այստեղի ծառերը, որոնք ապացոյց են սևահողի աննշան շերտի և դրա տակը



հանգստացող զրանիտի դանդաղածներն: ծառի արմատները խորը չեն կարող գնալ և քիչ մտնե՞ղ են ստանում: նոսր է անտառը, մենք բարձրանում ենք մի թուճրի վրայ, որի դադաթին երևում է մեկուսացած մի շիրիմ: մտնելուս ենք ու կարողում: «Յիշիր ինձ, Տէր, երբ այցելես Գո եկեղեցին»: Իսկ տակը— «Իշխան Նիկ Իվ. Մանուելով, ծնունդ է 1780, վախճանուել է 1856 թ. մայիսի 3-ին»: Ո՞վ է այս իշխանը և ինչու է թաղուած այս կղզում: մեր առաջնորդ վանականը չկարողացաւ պատասխանել և խորհուրդ տուեց առաւօտեան վանահօրը հարցնել և արխիւում իմանալ: Այս հեռուոր երկրում մի ազգակցի շիրիմ յայտնագործելու մտքով միւս առաւօտ ես վանահօր մօտ գնացի, մտքումս Մանուէլովը՝ Մանուէլեան դաճնելով: Բայց վանահայրը, որ անկարող էր արխիւը բանալ, միայն այն ասաց, ինչ որ ինքը լսել էր ծեր վանականից—այդ իշխանը մեծ նաստանի բարերարն է եղել և գանկացել է կղզում թաղուել: Իմ կատակածները մնացին էլի կասկածներ: և ես չիմացայ այդ իշխանի ո՞վ լինելը: Ինչու չը կարծել, որ տարաբախտ մի հայ իշխան, հայրենիքի դժնդակ պայմաններից վանուած այս կղզին իրեն հայրենիք է դարձրել և հանգստանում է:

Վանականը մեզ ցոյց է տալիս մի մատուռ. երևում են վառուած մոմեր. մօտենում ենք, մեծ ապառաժի մի կտոր, որի վրայ փայտեայ մատուռ է կանգնեցրած. մանում ենք մատուռ, մեր առաջնորդը պատմում է, որ այս մատուռը ունի առանձին նշանակութիւն և Կօնսեցի մկրտատանի ամենամեծ սրբութիւնն է— ապառաժը հնում եղել է կոպաչատ կօրելների (Ֆինլանդացիների մի ցեղը) զոհի սեղանը. տարին մէկ անգամ չըջակայ ազգաբնակութիւնը մի ձի է բերելիս եղել, ձիուն զոհուած էին այս ապառաժի վրայ, որպէս զի շար ոգիները չը մնասն ժողովրդին. մորթուած ձիերի պոլիները ամբացնում էին ապառաժին. դրա համար էլ այս ապառաժը կոչուում է «Կօն-Կաճեն» «ձի-բար»: Իսկ ամբողջ կղզին ու մենաստանը՝ Կօնսեց<sup>1)</sup>: Երբ Արսէնի ճգնաւորը հաստատուել է այս կղզում, (16-րդ դարում) շար ոգիները դեռ ապրում էին այդ ժայռի մէջ. պատմում են, որ ճգնաւորը աղօթել է ու սրբազան ջրով թրջել ապառաժը. այդ ժամանակ նրա ծակերից դուրս են գալիս շար ոգիները և սև աղոտների կերպարանքով թնոնում են դէպի մօտակայ Ֆինլանդական ափը, որտեղ այժմս կեկսհօլմ՝ քաղաքն է: Այդ դէպքի առթիւ ապառաժի գագաթին շինուած է այս փայտեայ մատուռը:

1) Մի ուրիշ վարիանտ կայ «Կօնսեց» բառի մեկնութեան վերաբերող. կղզում գտնուող ապառաժը ձիու գլխի ձեւ ունի. այդ պատճառով էլ ժայռին ձի-բար են ասում, որից և ստացուել է կղզու անունը: Գ. Տ. Ռ.

Այդ մատուռից քիչ հեռու գտնուում է «տուրք աղբիւրը» (СВЯТОЙ КОЛОДЕЦЬ): Սա մի փոս է, մէջը ջուր կայ. ջրի մակերևութի վրայ փորուած է երկաթէ թելերի մի ցանց, երևի նրա համար, որպէսզի քարեր և այլ առարկաներ չընկնեն ջրի մէջ. այս ջուրը «հրաշափաս»— «հրաշագործ» է կոչուում: Երբ ես տեսայ այս աղբիւրը և լսեցի, թէ ինչպիսի հաւատալիքներ են կապուած այս աղբիւրի հետ, որ բժշկոււմ է հիւանդներին և այլն, իսկոյն յիշեցի վրացիների Ջեղազէնի վանքը, որ գտնուում է Թիֆլիսին մօտ, Մցխէթի դէմը, սարի ծայրին, անտառի մէջ. այնտեղ եկեղեցու մէջ, քարերով շրջապատուած խոռոչում ջուր կայ, որ շեքեփներով խմում են հաւատացեալները և այցելուները. աղբիւրի վերեւ կայքրուած է մի տախտակ և գրած է «ЧУДОДѢЙСТВУЮЩІЙ ИСТОЧНИКЪ» հրաշագործ աղբիւր:

Ապա մենք երկար դրօնում ենք կղզու անտառի մէջ, մրցում ենք իրար հետ արագ վազելու, ուժգնօրէն աշխատեցնում ենք թոքերս, դուրս ենք վանում նրանց մէջ մնացած մայրաքաղաքի օդը և անտառի բուրմունքով ենք մի առ ժամանակ զմայլումս Դուրս ենք գալիս ափս Պարզ, գուլալ ջուր. սրա յստակութիւնը և համը հային յիշեցնում է Գեղարքունեաց ծովը՝ Սևանայ լիճը: Ջրի եղբին փոռած է գրանիտի աւազ. բաց վարդագոյն, կարմիր և տարբեր արտացոլում ունեցող բերեղներով գրանիտի այս ալիւրը մեզ շատ է հետաքրքրում. այնչափ մաքուր է այս աւազը և այնքան գեղեցիկ, որ ամեն մէկս մեր թաչկինակները լցնում ենք նրանով և աղա վերադառնում հիւրանոց՝ մեր սենեակը:—Սամովարը արդէն պատրաստ էր:

Հետեակ առաւօտը մենք մտնում ենք և կեղեցի, չըջում ենք անտառի մէջ ցրուած սկիտները. այստեղ երկու տեսակի եկեղեցի կայ, մէկը՝ ոռօական սովորական եկեղեցին է, երրեմն երկյարկանի. ներքին յարկի եկեղեցին ծառայում է ձմեռը աղօթելու համար, այստեղ աւելի տաք է, իսկ վերին յարկի եկեղեցին, որ գտնուում է ձմեռայինք վրայ և աւելի յուսաւոր է ու բարձր, ծառայում է ամառները աղօթելու. այս եկեղեցիներում ուխտաւորները կարող են աղօթել առանց թոյլտուութեան: Բայց երկրորդ տեսակի եկեղեցիները՝ որոնք սկիտներ են կոչուում—միայն որոշ օրեր են բաց ուխտաւորների համար. այս սկիտներում առանձնացել են սխիմօնախները, ծերացած և կամ մենակեցութեան սէր ունեցող երիտասարդ վանականներ, որոնք ուրիշ պայմաններում գուցէ ճգնաւորներ լինէին, բայց կօնսեցում և Վալաամում նրանք միայն սխիմօնախներ են, «մեղմ-ճգնաւորներ», եթէ կարելի է այսպէս անուանել նրանց. այդ մեղմ-ճգնաւորները օգտուում են մենաստանի տնտեսութիւնից. պահում են իրենց հաւեր և այլ թոչուներ, միայն մարդկանց երես

չեն ուզում տեսնել, մանաւանդ խորշում են կանանցից, միայն տարուայ մէջ որոշակի օրերին նրանք թոյլ են տալիս ուխտաւորը ներին և կանանց ներս մտնել իրենց սկիտը, որի պարիսպի դռներու բիշ օրեր միշտ փակ են:

Կօնկեցի ամենամեծ սկիթն է «СКИТЪ ВСѢХЪ СВЯТЫХЪ» (սկիթ բոլոր սրբոց), որ ունի մօտ 40 սխիմօնախներ: Ամբողջ Կօնկեց մենաստանում կան 280 վանականներ, դեռ չը հաշուած մոնթերմ (ПОСЛУШНИКЪ), որոնք սպասաւորում են մենաստանի շինութիւնների մէջ: հայերիս համար այս մենաստանը շատ մեծ կը թուայ, բայց Ռուսաստանի միւս մենաստանների հետ համեմատած Կօնկեցը սակաւամարդ վանքերից մէկն է. այլ բանէ Վալաամը, որին կը դառնանք մի փոքր յետոյ:

Կօնկեց մենաստանի անտեսութիւնը ամբողջապէս գտնուում է իրենց՝ վանականների ձեռքը: ալիւրը մեծ մասամբ դրսից են բերել տալիս, իրենց պատկանող կղզիներից ստացածը չէ բաւականացնում. վանականները առանձին ինամբրով մշակում են բանջարանոցները, պարտէզները, որոնց արգասիքներն և սպառում են. այս մենաստանում աչքի է ընկնում և կաթնատեսական ֆերման, ուր կան 27 կթու կովեր, ունեն սերզատ-(սեպարատոր)-բայց չեն օգտուում. գերադասում են հին ձեռ՝ փոխել: Բացի կովերից կան և 12 ձի և 6 եղներ. այս անասուններով վանականները մշակում են իրենց դեռտիները:

Չ.

Տեսնելու քիչ բան կար Կօնկեցում. այս մենաստանը այնքան մեծ նշանակութիւն չունի. նրան իւր ստուէրի մէջն է առել Վալաամը, որ Ռուսաստանի քաղաքականութեան և հեղինակութեան տարածողն է Ֆինլանդիայում:

Ես առաջ էլ չատ էի լսել ու կարդացել Վալաամի, նրա կալուածների ու գործարանների մասին. և ցանկանում էի օր առաջ տեսնել այդ մենաստանը. այդ պատճառով ստիպուած եղայ բաժանուել Կօնկեցում երկար մնալու տրամադրութիւն ցոյց տուող ընկերներիցս և առաջին չօգնուածով մեկնեցի Վալաամ:

Ութ ժամ լախարձակ լծում նաւելուց յետոյ, չօգնուած մօտեցնում է Վալաամի մեծ մայր կղզուն: Նաւահանգստում մեզ դիմաւորում են վանականները, նրանցից մի քանիսի ձեռքին կային զանազան գործուածքներ, ողորկ քարերից պատրաստած առարկաներ, մենաստանի և կրօնական բազմաթիւ պատկերներ. գդալներ կ'ընդունէ կղզու ավին, փայտեայ փոքրիկ խանութում կարգով դասաւորուած են վանականների ձեռքի այդ աշխատանքները, նոյնպէս և

մենաստանի տեսարանները բայ նամակի վրայ, պահարաններում շարած են կրօնական բովանդակութեամբ գրքոյկներ:

Նաւահանգստի դիմաց, բարձրաւանդակի վրայ—գտնում է հիւրատունը՝ եռհարկանի ընդարձակ շինութիւն, արտաքուստ սպիտակ ներկած, ձանապարհը, որ տանում է նաւահանգստից դէպի հիւրատուն՝ մաքուր աւլած է, կարմիր քարեփոշիով ծածկուած: Հիւրատան ընդարձակ գաւթում շարքով կանգնած են սպասաւորող մօնթերը. նրանցից մէկը մօտենում է ինձ և վերցնելով ձեռքիս կապոցը՝ հիւրընկալ արեղայի կարգադրութեան համեմատ՝ առաջնորդում է երկրորդ յարկի սենեակներից մէկը: Նոյն մաքրութիւնը, ինչ որ Կօնկեցում, աւելի լուսաւոր սենեակներ, գեղեցիկ կահաւորութիւն, փափուկ անկողին: Հաճոյք եմ ստանում—այս հիւրատունը դիտելուց, բայց չեմ համբերում, մի կերպ փոխում եմ վերնագրաստ և դուրս եմ գալիս՝ վանահօրը ներկայանալու: Հիւրընկալ արեղան պատուիրում է մի սպասաւորի՝ տանել ինձ վանահօր կացարանը անցնում ենք հիւրատան առաջը գտնուող պարտէզը, որի կենդրոնում բարձրանում է մի քարեայ կոթող, այս կոթողի չորս կողմերը լեցուած են արձանագրութիւններով. թէ որ թուին որ բարձրաստիճան անձն է այցելել, այս կոթողից ես իմացայ, որ Աղէքսանդր II կայսրը իւր ընտանիքով այցելել է Վալաամ և շրջապատի մի քանի ընդարձակ կղզիները նախքան է մենաստանին: ի սեփականութիւն: Այս կոթողից քիչ հեռու կայ մի քարեայ սեղան և վրան արևի ժամացոյց. մօտենում ենք վանականների խցերի շարքին: Պարսպի մեծ մուտքի ճակատին ամրացրուած է մի մեծ մեխ և չորս բոլորը նշանագրեր. սա էլ արևի ժամացոյց է. այս պատի արևի ժամացոյցը յիշեցնում է ինձ Հաղարծնի և Սօչափանքի աւերակների վրայ մնացած ժամացոյցները... Վանականների խցերը դտնվում են մենաստանի մայր տաճարի երկու կողմում. երկար շարքով ձգվում են այդ խցերը՝ երկյարկանի, նոյնպէս սպիտակ ներկած, շինութեան մէջ. վանահայրը ապրում է առանձին մայր տաճարի դիմաց:

Առանց սպասելու տալու՝ ինձ ներս են հրաւիրում, փոքրիկ հիւրասենեակ, եւրոպական ոճով դարձաբուած, վանականների կենդանանկարները պատերից կախած. մի քանի պահարաններ—փակ փեղկերով: Իգուռեն Մավրիկի վանահայրը հրաւիրում է նստել ևս ցոյց եմ տալիս նրան ուս մամուլի աշխատակից լինելու վկայողիւր և յայտնում եմ Վալաամ գալուս նպատակը: Վանահայրը քիչ վախեցած իմ յայտնածից՝ հարցրեց կամացուկ.

— Ինչպէս թէ ցանկանում էք ծանօթանալ մենաստանին: Մեզ մօտ գալիս են աղօթքի և ուխտի համար. այստեղ գալիս են՝ մաքրելու իրենց հոգին, քաւելու մեղքերը, բարեպաշտութիւն սովոր

քելու, Աստուծոն մօտենալու: Եթէ Դուք ձեզ արդար էք համարում  
և կարիք չունիք այս մենաստանում աղօթելու—իզուր էք եկել:

Երկրորդ անգամ ես բացատրում եմ, որ ինձ աւելի հետա-  
քրքրում է վանքը, նրա պատմութիւնը, ներկայ դրութիւնը, միա-  
բանների թիւը, տնտեսութիւնը, որ ես դեռ երիտասարդ եմ, հա-  
մեմատարար մաքուր, և որ ուխտի ու քառութեան համար չէ, որ  
եկել եմ. ասացի, որ ես կօշկասցի եմ, ազգով հայ, և որ իմ տե-  
սածի ու լսածի մասին գրելու եմ հայ և ուրա թերթերում, այստեղ  
վանահայրը կարծես զլխի ընկաւ, թէ բանն ինչու՞ն է և բարի  
արտայայտութիւն տալով դէմքին—մտերմական գրոյց սկսեց. վանա-  
հօր ձերացած դէմքը, սպիտակ և նօսր միրուքը, ճաղատ գլուխը,  
որոնող և բարի աչքերը ինձ յիշեցրին մի հայ վանականի, որ նոյ-  
նանման պայմանների մէջ է գտնուում և նոյն դիրքն ունի. նա էլ  
վանահայր է մի կղզու վրայ թառած հինաւուրց մենաստանի, նա  
էլ ունի ձերացած դէմք, սպիտակ մօրուս, ճաղատ գլուխ, որոնող  
աչքեր բարի հայացքով: Ես երկար դիտում էի Վալաամի վանահօրը  
և ինձ թվում էր, թէ գտնուում եմ հայ մենաստանի, նրա վանա-  
հօր մօտ. ընդհանուր շատ բան կար այս երկուսի մէջ, արտաքին  
տպաւորութիւնների առաջին հայեացքը մօտեցնում է իրարից չորս  
հազար վերստ հեռու գտնուող մենաստանների վանահայրերին.  
բայց... միայն արտաքին նմանութիւն. երբ աւելի երկար ես դի-  
տում, երբ աւելի խորն ես թափանցում քո դիտողութիւնների մէջ  
—պարզուում են երկուսի հակառակ պատկերները... դեռ դուրս չէի  
եկել վանահօր մօտից, չէի տեսել մենաստանի միւս միաբաններին,  
և չէի ուսումնասիրել նրանց կենցաղը—բայց մի բան ինձ համար  
պարզուեց. 880 միաբան ունեցող այս մենաստանը չունէր այն, որ  
ամենից գրաւիչ բանն է իմ հայրենի վանքերում, այդ հսկայ մե-  
նաստանը բոլորովին գուրկ էր գրականութիւնից, դպրոցից, Պետեր-  
բուրգից ստացւում էին միայն երկու լրագիր—հոգևոր թեմերի  
պաշտօնական օրգաններ՝ ես իմ դարմանքս յայտնեցի վանահօրը.  
Թէ ինչպէս միաբանները չեն հետաքրքրուում աշխարհի անցած  
դարձածով, չեն կարդում օրաթերթեր, չեն ստանում լուրջ ամսա-  
գրեր. վանահայրը ինձ պատասխանեց, որ ամեն միաբան աղօթքով  
է անցկացնում իւր օրերը և ժամանակ չէ լինում լրագիր կարդա-  
լու և մէկէլ սովորութիւն չկայ լրագիր բերել տալ, սովորութիւն  
չկայ հասարակական և համամարդկային հարցերով հետաքրքրուել...

Միթէ պէտք կայ ասելու, որ հայոց մենաստաններում գրա-  
կանութեան սէրը, լրագրերի ընթերցումը և դպրոցական գործը  
թէ և չէ գտնուում նախանձելի բարձրութեան վրայ. բայց յամենայն  
դէպս կայ, հայ վանականները հետաքրքրուում են հասարակական  
կեանքով, կարդում են թերթեր. Հայոց վանքերը ընդհանուր առ-

մամբ, յուսաւորութեան և դպրութեան աղբիւրներ են եղել և այդ-  
պէս են մինչև այժմ. հայ վանականներն են եղել գրականութիւնը  
ձաղկեցնողը, դպրութեան վարդապետները. ներկայիս ես չեմ կա-  
րող երևակայել մի հայ վարդապետ, որ կարողանայ մի քանի շա-  
բաթ առանց լրագիր կարդալու անցկացնել. իսկ Վալաամի մօտ  
հազար միաբանները տարիներով ոչինչ չեն կարդում, դրօժ հեռ ոչ  
մի յարաբերութիւն չունեն. վանահայրը գաղափար չունի լրագրու-  
թեան մասին—և երբ թերթի մի թղթակից է յայտնուում—նա  
զարմանում է:

Մեր գրոյցի վերջը ես խնդրեցի վանահօրը՝ թոյլ տալ և կար-  
գադրել, որ ինձ ցոյց տրուեն մենաստանի գործարանները, հիւան-  
դանոցը, դեղատունը, «մուղէյը», կաթնատնտեսական ֆերման և այլն:  
Վանահայրը թոյլ տուեց և կանչելով իւր մօտ գտնուող վանակա-  
նին—կարգադրութիւններ արաւ իմ ցանկութեան համեմատ:

է.

Իերօղիակոն Միքայէլի հետ ես մտնում եմ մենաստանի մայր  
տաճարի ներքին յարկը. ընդարձակ եկեղեցի, բնմը զարդարուած է  
ոսկեջրջանակ պատկերներով. բայց այստեղ մութ է և գածը. բար-  
ձրանում ենք վերին եկեղեցին—բարձր—ընդարձակ գմբէթով երե-  
կոյեան ես ներկայ եղայ ժամերգութեանը. երգում էին բոլոր վա-  
նականները. առհասարակ Վալաամը յայտնի է իւր հին երգեցողու-  
թեամբ (СТОЛОВОЕ). ժամերգութիւնը տևում է շատ երկար. ներքին  
յարկի եկեղեցում անդադրում կերպով կարդում են շարականներ.  
եկեղեցու պատերից ամրացրած են շատ մեծադիր պատկերներ, ա-  
մեն մէկի առաջ կախուած է մի—մի կանթեղ. Մայր եկեղեցին ունի  
բարձր զանգագատուն, բաղկացած վեց յարկից. ամեն յարկում կան  
զանգակներ, իւրաքանչիւրը իւր նշանակութեամբ: Այս զանգակա-  
տան վերին յարկից բացուում է դեղեցիկ տեսարան, երևում է ամ-  
բողջ կղզին, հորիզոնի ծայրին սինն են տալիս ֆինլանդական գիւ-  
ղերը և անտառը:

Մենք սկսում ենք չրջակայել մենաստանի նշանաւոր շէնքերը  
և գործարանները: Ամենից առաջ ինձ առաջնորդում են այսպէս  
կոչուած «Օղերեոյթաբանական կայարանը», որ գտնուում է վանա-  
կանների կացարանի ծայրին. չէկ մագերով մի վանական երկար  
տարիներ օղերեոյթաբանական դիտողութիւններ է արել այս սեն-  
ակում, նա էլ մեզ բացատրութիւններ է տալիս. տարուայ միջին  
ջերմութիւնը այստեղ շատ ցածր է՝ 3, 1° = յունուարին՝ —9,6°, ապ-  
րիլին՝ +1,6°, յուլիսին՝ +15,7°, հոկտեմբերին՝ +4,0°, բայց չնայած  
այս խիստ ցրտութեան, Վալաամում կան պտղատու այգիներ, որոնց  
մէջ հաանում են՝ խնձոր, սալոր և ուրիշ մրգեր: Այս տեղից ամեն

ամառուայ վերջը Պետերբուրգի գլխաւոր դիտարանն են ուղարկում օդի փոփոխութեան և ճնշման, քամիների ուղղութեան և ուժի մասին տեղեկութիւններ. չէկ վանականը ամեն օր երեք անգամ, դիտողութիւններ է անում, առաւօտեան ժ. 7-ին, ցերեկուայ 1-ին և երեկոյեան 9-ին, ինչպէս ամեն տեղ՝ բակում, ծառերի մէջ երևում էին քամիների ուղղութեան համար դրուած ցցեր, անձրևի և ձեան չափող ամաններ և ջերմաչափեր:

Մտնում ենք գրագարան, որին կպած է թանգարանը, պատերին ամրացրուած են թաղաւորական տան անդամների նկարները, պահարանների մէջ գրքեր. քիչ բան կայ հետաքրքիր. ոսկեկազմ մի աւետարան պահուած է ապակեայ պահարանում, որ նուիրել է մի հարուստ իշխան. մեծ տեղ է բռնում արքեպիսկոպոսական ոսկեթել զգեստը, որ պահուում է Վալաամ այցելող արքեպիսկոպոսների համար: Աւելի ուշագրաւ է մի վանականի մանրակրկիտ աշխատանքի արդիւնքը—նա հինգ կոպէկանոցի վրայ փորագրել և տեղաւորել էր ամբողջ «Հաւատոյ հանգանակը». ես դիտեցի այդ հինգ կոպէկանոցը խոշորացնող ապակու միջոցով և մնացի զարմացած վանականի աշխատանքին. բայց ասացին, որ նա չէ օգտուել խոշորացոյցով:—Գրագարանը ունի 14,000 օրինակ գրքեր, բոլորը կրօնական բովանդակութեամբ:

Գրագարանից մենք անցնում ենք նկարչական սենեակներին—երկու ընդարձակ դահլիճներ, մէկում մի ձեր վանականի զեկավարութեամբ մօտ 30 վանականներ իւղաներկով զանազան նկարներ են պատրաստում. զլիււերապէս մենաստանի պատկերները նրանք դրօշմում են սղորկ—տափակ քարերի, և քաթանի վրայ. վարունգաձև ողորկ քարերը ներկում են կանաչ դոյնով և երևում է որպէս ընական վարունգ. այս նկարները նրանք ծախում են էփան զներով իրենց կղզում—և ուղարկում են Մօսկուայ—ուր Վալաամ մենաստանը ունի իւր տունը: Երկրորդ սենեակում տեղաւորուած են լուսանկարչական ապպարատները, այս գործիքներով վանականները լուսանկարում են կղզու զանազան տեսարանները:

Այստեղից մօտիկ է և մոմի գործարանը, որ ահագին քանակութեամբ մօմ է պատրաստում և ուղարկում է Ֆինլանդիայում գտնուող պրափօսաւ եկեղեցիները:

Ապա մենք մտնում ենք մի ընդարձակ տուն, որ ծառայում է որպէս ջրամբար. այստեղ մի շարք նասոսների օգնութեամբ լճից ջուրը բարձրացնում են բարձրաւանդակի վրայ և ապա խողովակների միջով ուղարկում են ամեն մի կաղարան. պէտք է յիշել, որ թէ հիւրատունը և թէ վանականների կաղարանները ձմեռը տաքանում են տաք ջրի միջոցով. այդ պատճառով էլ ջուրը այս մենաստանում ահագին ծառայութիւններ է մատուցանում: Այս տան մի

16-179  
68-26

ծայրում գտնուում է և անասունների ախոռը. մեր մտած բոպէին այնտեղ կապկապած էին 14 հատ ձիեր և 8 եղներ. բոլորն էլ շատ չաղ էին, դեղեցիկ կաղմուածքով. ասացին, որ ձիերից մի քանիսը նուիրել է թագաւոր կայսրը: Այս մենաստանը ունի ընդամենը 32 ձի, 20 եղներ և 57 կթու կովեր, դրանց մասին կը գրեմ քիչ յետոյ՝ աւելի մանրամասն:

Մենաստանը ունի իւր դարբնոցը, ուր աշխատում են վանականները և պատրաստում կամ նորոգում գործիքները. դարբնոցի մօտ է ատաղձանոցը:

Մայր եկեղեցու մօտերքն է գտնուում և հիւանդանոցը, որին կպած է դեղատունը. երկյարկանի մարուր շինութիւն է, ունի 24 մահճակալ, հիւանդանոցի բժիշկի պարտականութիւնը կատարում է մենաստանի մի միարանը, որ եղել է բժշկական ֆակուլտետում ուսանող, բայց չէ վերջացրել. նրա հետն են և հինգ փրաքուծներ, որոնցից իւրաքանչիւրը հերթապահ է օրուայ մի օրոյ ժամին: Հիւանդանոցում կային 7 հիւանդներ, բոլորն էլ զառամեալ վանականներ: Հիւանդանոցի առաջը ընկած են պտղատու այգիներ, իսկ նրանց ծայրին—գերեզմանատունը. այստեղ են հանգստանում մենաստանի վախճանուած միարանների աճիւնները. շատերի վրայ չկան շիրիմներ, հասարակ մի քար է վրան ձգած և անունը գրած: Անշուք հողաթումբերի միջից երևում են մի քանի գեղեցիկ արձաններ—վանահայրերի դամբարաններ են: Իմ ուշագրութիւնս գրաւում է ամբողջ քարից մեծ շիրիմը, որ պատկանում էր Շվեդացոց Մագնուս թագաւորին. այդ թագաւորը մի քանի անգամ յարձակուել է Վալաամ մենաստանի և կղզու վրայ, վերջը ինքն է դառել վանական և 1371 թուին թաղուել է այստեղ. շիրիմի վրայ սուսերէն լեզուով փորագրուած է հետևեալ ուշագրաւ ոտանաւորը.—

На семь мѣстѣ тѣло погребено,  
Въ 1371 году оно землѣ предано.  
Магнуса, Шведскаго Короля,  
Которое святое крещеніе восприя  
При крещеніи Григорьемъ наречень.  
Въ Швеціи онъ въ 1336 году рождень,  
Въ 1360 году на престоль возведень.  
Великую силу имѣя и оною ополчень,  
Двоекратно на Россію воевалъ.  
И о прекращеніи войны клятву давалъ,  
Но, преступивъ клятву, наки вооружился,  
Тогда въ свирѣпихъ войнахъ погрузился.  
Въ Ладожескомъ озерѣ войско его осталось  
И вооруженнаго флота знаковь не оказалось.



Самъ онъ на корабельной доскѣ носился,  
 Три дня и три ночи Богомъ хранился,  
 Отъ потопленія былъ избавлень,  
 Волнами къ берегу сего монастыря управлень,  
 Инокѣми взятъ и въ обитель внесень,  
 Православнымъ крещеніемъ просвѣщень.  
 Потомъ не мѣсто царскія діадимы  
 Обличень въ монахи, удостоился схимы.  
 Поживъ три дня, здѣсь скончался.  
 Былъ въ коронѣ и схимою увѣнчался.

Որոշու ուղղափառ վանականները պարծանքով են ցոյց տալիս այս գոռոզ թագաւորի շիրիմը, որ վերջերում քրիստոնէական հեղութեամբ սրբւմ է հագել: Վերջորդում ես յիշեցի այս արձանագրութիւնը և մի չվերացու հարցրի այդ Մագնուս թագաւորի մասին. չվէղացին ինձ բացատրեց, որ Մագնուս անունով թագաւոր իրենք չեն ունեցել 14-րդ դարում—և որ շատ բան այդ արձանագրութեան մէջ վանականների երևակայութեան արդիւնքն է լինի:

Գերեզմանատան չորս անկիւններում, բարձր ձողերի վրայ կանգնեցուած են Գարրիէլեան փողի մարմնացումս—մի հրեշտակ տաւառնում է օդի մէջ—երկար փողը ձեռքին. թւում է, թէ այդ հրեշտակը թռչում է օդի մէջ—մի ստքով է միայն ամբարձրած ձողին և կանչում է գերեզմանատանը հանգստացողներին, զարթեցնում է քնածներին:

Ը.

Հետևեալ առաւօտը ևս ստանում եմ վանահօր օրհնութիւնը և գնում սկիթները շրջելու: Առնասարակ ամեն մի հիւր, եթէ ցանկանում է այցելել մենաստանի որ և է հիմնարկութիւնը, պէտք է դրա համար ստանայ վանահօր օրհնութիւնը, որ համազօր է թոյլտուութեան:

Սկիթները անթիւ են այս մենաստանում. մայր կղզու ամեն յարմար անկիւնում պարիսպ է քաշած և մատուռ կանգնեցրած. վանքաօգատկան շրջակայ կղզիների վրայ ևս կան սկիթներ, ինչպէս կը տեսնենք: Այս սկիթները իրենց բնակիչներով այժմ կորցրել են այն նշանակութիւնը, ինչ ունէին առաջ: Միջին դարերում սկիթները մի մի ձգնարաններ էին, ուր ժողովում էին ձգնաւորները և խիստ կենցաղով—աղօթքներ կարդում. այդ ձգնաւորները չունէին որոշ բնակարան, բաւականանում էին վայրի գաղանների մորթիներով, որից և պատրաստում էին իրենց զգեստները. (սկիթ բառը իսկ յունարէն է—σκήτος—և նշանակում է կաշի, մորթի): Սակայն

ժամանակի ընթացքում այս ձգնաւորները տեղի են տուել ներկայ սխիսմոնարների, որոնք հագնում են մահուղէ վերարկուներ և միւս վանականներից տարբերուում են միայն իրանց «գոգնոցով». սխիսմոնարների վերարկուների առաջին մասում սե ֆօնի վրայ սպիտակ կտորով նկարած է խաչափայտը ոռոսական ձևով, իսկ դրա տակը չոր գանգ և ոսկորներ. այս առանձնաձևութեամբ են միայն նրանք ջողուում միւսներից, միշտ ի նկատի ունեն խաչափայտը և գանգը.—այն, որ մեռնելու են և ուրիշ, վերին կեանք կայ, այս inseparable, որ միշտ աչքի առաջ ունեն այդ սխիսմոնարները: Վաղամի միայն մի քանի սկիթներն են անմատչելի ուխտաւորների համար, շատերը բաց են և ոչինչով չեն տարբերուում մենաստանի միւս կեղեկիցներից. ըստ սովորութեան սկիթներում անդադրում վարդացում են ս. Գիլքը և շարականները. սխիսմոնարները հերթով կարդում են նոյնպէս հաւատացեալների պատուիրած «сорокоустъ»-ը, (հանգուցեալի անուան անդադար յիշատակում. այդ բանի համար ահագին փողեր են ստանում):

Մայր կղզու բարձրավանդակի մի քանի բլուրները կնքուած են Պաղէստինէի բլուրների անունով. ահա Գողգոթան, Իեթղհէնմը, Գեթսեմանի պարտէզը և այլն: Հաւատացեալ վանականները աւելի յաճախ յիշելու համար Մեծ Ուսուցչի օրինակը—նրա ապրած միջավայրի անունով են կնքել և իրանց միջավայրը...:

Ճաշուայ դանդերը լսելուն պէս ես գնում եմ ճաշարան, որ գտնուում է Մայր տաճարի բակում. ընդարձակ մի դահլիճ է, ուր ժողովում են միաբանների մի մասը և ուխտաւորները՝ միասին ճաշելու. դահլիճում կարող են տեղաւորուել միայն 300 հոգի. միաբաններից շատերը առանձին են ճաշում—դահլիճում տեղ չլինելու պատճառով: Ընդհանուր հացկերոյթին (трапеза) նախագահում է վանահայրը, որ աղօթք է կարդում և օրհնում է սեղանը և սեղանակիցները, դահլիճին կից խոհանոցից բերում են երեք տեսակի խորտիկներ—ձկով ապուր, կաշա (փլաւի տեսակ) և քաղցրեղէն: Սեղանի տարածութեամբ մի քանի տեղ մեծ ամանով դրուած է ոռոսական կարմիր կվասը, որ առատութեամբ մատակարարում է մենաստանը: Ամբողջ հացկերոյթի ժամանակ դահլիճի կենդրոնում կանգնեցրած ամբիոնից լսուում է վանական ընթերցումը ս. Գրքի: Կարգաւանութիւնը կատարեալ է այս դահլիճում. ուշացածները համբերութեամբ սպասում են իրենց հերթին, վանական մատակարարները աշխատում են բոլորին կշտացնել. Վերջանում է ճաշը. վանահայրը նորէն օրհնում է սեղանը և մեզ. դուրս ենք գալիս:

Կէս ժամ յետոյ ես դնալու եմ կաթնատնտեսական ֆերման. վանահայրը կարգադրել էր, որ ինձ տան մենաստանի կառքերից մէկը՝ այնտեղ գնալու համար: Տպաւորութիւններս գրի առնելուց

յետոյ նստում եմ կանաք և գնում երկու վերստ հետու գտնուող ֆերմանս ճանապարհը մի որոշ տեղ խճուղի է, գնում է նուր անտառի միջով. յաճախակի երևում են մատուցներ և պարսպապատ սկիթներ, կաթնատնտեսական ֆերմայի տէրը (Хозяинъ—այսպէս է կոչուում վանականներից այն մէկը, որ բոլորի վրայ մեծ է և հսկում է գործին) ինձ առաջնորդում է ընդարձակ ակտոր. պատերին զուգահեռական ձգուում են մսուրները, իւրաքանչիւր կովի համար կայ առանձին տեղ, երկու կողմից ձողերով շրջապատուած, հորթերը առանձին են պահուում կովերը լաւ տեսք և կազմուածք ունէին. մայրի վերջին կովկասեան կովերը «ընկած», լղարած են լինում, բայց վալաամի այս կովերը շատ լիքն են. վանականը բացատրում է, որ շատ սակաւ է պատահում, երբ դուրս են թողնում կովերին՝ ալաթելու. միշտ պահում եմ ակտորում, անուշիկը առատ են տալիս և հաշիւ են պահում, թէ որ կովին որ օրը ինչ են տուել և թէ ինչպիսի երեսոյթներ են նկատել կովի շարժումների մէջ. այնպէս որ իւրաքանչիւր կով ունի իւր կենսագրութիւնը. կաթնատնտես վանականները դեկավարուում են Դանիական ձեով կերակրելուն— փոխիտական անուշիկ են տալիս. կովերը մեծ մասամբ ուսուական ծագումն ունին, խօլմօզօրի կովերից են շատերը, լաւ պահած. միայն կթու կովերի թիւը 57-ն է. կային և երինջներ. վերջիններին պահում են առանձին շինութեան մէջ. ստացուած կաթը ամբողջապէս գործ են ածում մենաստանի պէտքերի համար.— պաւ օրերը կաթը ժողովում են, իւր և պանիր են պատրաստում, (ուրեն սերզատ՝ Альфа-Лаваль) իսկ ուտիս օրերը կաթը ուղարկում են միարաններին և բաժանում են սկիթները. Այս կաթնատնտեսական ֆերմայում, ինչպէս ամեն տեղ այս մենաստանում, տիրում է կատարեալ մարքութիւն և կարգապահութիւն:

Ինձ հիւրասիրում են հում-սերով, չնորհակալութիւն եմ յայտնում և վերադառնում եմ հիւրատուն՝ հանգստանալու և մենաստանի կղզիները գնալու:

Թ.

Կաղօթեան լճի հիւսիս-արեւմտեան մասում սրուած են մօտ 40 մեծ ու փոքր կղզիներ, որոնք պատկանում են վալաամ մենաստանին. եւս դուրս եկայ չրջելու մի քանի կղզիները. կան ընդարձակ, 10 վերստ երկարութիւն ունեցող կղզիներ, որոնք և տալիս են բաւականաչափ հացահատիկներ՝ վանականների համար. մենաստանին պատկանեալ կղզիների զեախը հաւասար է 3,100 ղեսեատինի, որից 150 ղեսեատինն է ցանքսի համար յարմար. մնացած հողերը ծածկուած են անտառով. Նշանաւոր կղզիներն են—ս. Սարգսի կղզին, ս. Գերմանի, Տիխովնսկիյ և Միրգօրկի. այս կղզիները եր-

կար մամանակ գտնուում էին շվեդացիների, ապա և ֆինլանդացիների իշխանութեան տակ, միայն 1878 թուին, վերջին ուսթուրքական յաջող պատերազմից յետոյ Աղեքսանդր Բ. կայսրը յիշեալ կղզիները յանձնել է վալաամի մենաստանին—իբր նրա սեփականութիւն:

Ս. Սարգսի կղզին չափազանց գեղեցիկ գիրք ունի. տեղ-տեղ բարձրանում են գրանիտի հսկայ-ապառաժներ, երևում է խորհրդաւոր և դալուկ անտառը, կանաչ մարգագետինները. կղզին 15 վերստ շրջագիծ ունի, շատ մօտիկ է ֆինլանդական ափին. այստեղ էլ կայ եկեղեցի, այլուր են 23 վանականներ, որոնք և մշակում են կղզին, հսկում են ցանքսի վրայ. Այս կղզուց դրանիտ են կտրում և տանում են Պետերբուրգ՝ շինութիւնների և արձանների համար. այս տեղի գրանիտը ոչինչով ետ չէ մնում Սերգօբօլի գրանիտից. որ մեծ հռչակ ունի Ս. Սարգսի կղզու արեւմտեան եզրում, բարձր ժայռի վրայ կանգնեցրած է 10 արշին բարձրութիւն ունեցող մի խաչ, դրա վրայ և արձանագրած է այս կղզիները մենաստանին յանձնելու կայսերական հրամանը:

Ս. Գերմանի կղզին ունի նոյն մեծութիւնը, ինչ որ ս. Սարգիսինը, մեր շոգնաւոր չէ մօտենում այս կղզուն. հետուից մենք տեսնում ենք եկեղեցին, վանականների խցերը, բանջարանոցները. արտերը և անտառը. կղզու ափը այստեղ էլ դարդարուած է գրանիտի անձեռադործ կերտուածքներով, որոնք հիացմունք են պատճառում դիտողին. Պետերբուրգում Աղէքսանդր Բ. կայսրի սպանուելու տեղը կառուցած տաճարի համար գրանիտը այս կղզուց են տարել. ափին զուգահեռական ձգուած է մաքուր գրանիտի աւազի երկար շերտ, որ իւր բազմազան արտացոլումներով և գունաւորումներով այնքան գրաւիչ է, որ յիշուած տաճարի սպասաւորողները եկեղեցի մտնող աղօթողներին այդ աւազազրանիտը տալիս են ի յիշատակ այցելութեան: Դաշնակցականների դատի առթիւ երբ Պետերբուրգ էին եկել շիրակեցի մի քանի դիւղացիներ, նրանց հետ այցելիցինք այդ տաճարը, գիւղացիք հիացան ստացած գրանիտի աւազների գեղեցկութիւնից. ամեն մէկը իւր ստացածը ամուր պահեց իւրայիններին հայրենիքում ցոյց տալու համար:

վալաամի մօտիկ կղզիներում գտնուում էին կաշուի գործարանը, որի աշխատողները ամբողջապէս վանականներն էին. այս գործարաններում բազմաթիւ միարանութեան համար պատրաստում են կօշիկներ և ձմերային վերարկուներ. կաշուի գործարանին կպած է խեթի-ռետինի գործարանը. մի ընդարձակ քարէ շինութիւն. այստեղ ծառերից ստացուած խեթը մշակում են և ի միջի այլոց սկիպիտար են պատրաստում, որ և մեծ գործադրութիւն ունի:

Ապա գալիս են «Եղիա մարգարէի» կղզին, «Սուրբ» կղզին և ուրիշ կրօնական անուններ կրող կղզիներ. Մեր շոգենաւը կանգ էր առնում համարեա իւրաքանչիւր կղզեակի մօտ, մեզ դիմաւորում էին կղզում բնակող միաբանները, առաջնորդում էին դէպի մատուռ, ուր և տեղի էր ունենում մաղթանք:

Բաւական ուշ էր, երբ շոգենաւը իջեցրեց մեզ Վալաամի ամբաստանող ևս որոշել էի — երեկոյեան այցելել վանական փուռը, որ կերակրում էր 1000 միաբաններին: Փուռը գտնուում էր ջրամբարի մօտ. աւազ-հացթուխը, սպիտակահեր վանականը ցոյց է տալիս երեք ամօհայ վառարանները, լայն և տափակ յատակով, մեր մտած միջոցին կրակը արդէն մաքրել էին և խմորի գնդերը թիակներով դասաւորում էին ընդարձակ փուռի մէջ. ևս մնացել էի զարմացած հացի այսքան մեծ պաշարի համար. ամբողջ մենաստանին միայն այս փուռն էր հաց մատակարարում. այստեղից են հաց ուղարկում և հեռաւոր կղզիները և սկիթները. ամեն օր պատրաստում են 60 փութ հաց, մեծ մեծ կտորներով, որի մէկը կշռում է 3 գրուանքայ. ձմեռները, երբ այցելուները և ուխտաւորները քիչ են, աւելի պակաս են հաց թխում. ալիւրը ստանում են և դրսից. մենաստանի մշակած արտերը չեն տալիս բաւականաչափ հացահատիկներ. այստեղ պէտք է յիշել և այն, որ ցորենի ալիւր չկայ այստեղ, այլ միայն հաճարի, որից և պատրաստում են հաց:

Երեկոյեան ևս վանահօր մօտն էի. նա ցանկացել էր լսել Կովկասի մասին, այնտեղ բնակող ազգութիւնների և նրանց եկեղեցիների վերաբերմամամբ մի շարք հարցեր տուեց: Ինձ հասկանալի էր վանահօր հետաքրքրութիւնը. նա առաջին անգամ էր տեսնում մի հայի, որ եկել է իւր մենաստանը. Տարիների ընթացքում շատ հարցեր են կուտակուել. Կովկասի անուան հետ կապուած շատ դէպքեր են պատահել, այդ բոլորը շարժել է վանահօր հետաքրքրութիւնը. Պետերբուրգի և Յինլանդիայի հոգևոր թեմերի պաշտօնական շարաթաթերթերը և ամսագրերը, որքան էլ խուսափած լինեն հասարակական հարցի շօշափելուց, բայց էլի տուել են մի մի պատահական տեղեկութիւններ Պետական Դումայի, Կովկասեան դէպքերի և այլ հասարակական բնոյթ կրող հարցերի մասին: Վանահայրը աւելի հետաքրքրուեց Պետական Դումայի կազմով:— Ի՞նչ բան է այդ Դուման. ո՞վքեր են այնտեղ նստած, ևս կարողացայ գոհացում տալ վանահօր հարցասիրութեանը, մանաւանդ, որ մի քանի շարաթ առաջ ներկայ էի եղել Պետական Դումայի մի նիստին: Տարօրինակ բան է, որ ևս հոգևորականութեան մէջ համարեա ոչ մի հետաքրքրութիւն չկայ դէպի Պետական Դուման. կարծես Պետերբուրգում ժողոված որևէ ժողովրդի այդ միտքը բնաւին չէր վերաբերում որևէ հոգևորականութեանը. վանահայրը կանխակալ

կարծիքներով չփոթուած էր, երբ լսեց իմ պատմութիւնը: նա հակացաւ, որ Պետական Դուման ճիշտ պատկերացումն է որևէ ժողովրդի տրամադրութեան, որ այնտեղ կան և հոգևորականներ, մի քանի եպիսկոպոսներ.

— Կովկասն էլ մարդիկ է ուղարկել Պետական Դումա. հայերիցն էլ ներկայացուցիչներ կան — հարցրեց Իգումեն Մավրիկիյ:

Նա պատասխանում եմ, որ Կովկասն էլ, ինչպէս և Ռուսաստանի բոլոր մասերը, սկսած Լեհաստանից մինչև Հեռաւոր-արևելք իւր մարդիկն է ուղարկել Պետական Դումա. հայերից էլ կան պատգամաւորներ, վրացիներից էլ, մանմեղականներից էլ:

Այստեղ մեր զրոյցը Պետական Դումայից անցնում է վրացիների և մանմեղականների վրայ. վանահայրը երբեմն նախ, միամիտ հարցերով ինձ ձգում է մեծ դժուարութիւնների մէջ. զրոյցը ջատ երկար տևելու տօնն էր ստանում. ևս մի կերպ վերջարանին եմ մօտենում և յայտնելով, որ վաղը պէտք է մեկնեմ Սերգօբօլ, շնորհակալութիւն եմ ասում ցոյց տուած աջակցութեան համար:

Այդ երեկոյեան եկել էին Կօնկեցում ետ մնացած ընկերներս. նրանց համար ևս մի օր էլ մնացի Վալաամում:

Ժ.

Ես չէի կշտանում Վալաամի կղզեակները ուսումնասիրելուց: Հետաքրքիր շատ բան, մերայինները յիշելու և տխրելու շատ առիթներ կային, մտախոհութեան արժանի բազմաթիւ հարցեր. իսկ իմաստալից տխրութիւնը և խոր մտախոհութիւնը ամենից հրապուրիչ բանն է ինձ համար այս աշխարհում... Ընկերներս, որոնք ինձ պէտ ձանձրացած Պետերբուրգից՝ դուրս էին եկել վճիռուքի ժխորից հետո՝ քիչ ազատ շունչ քաշելու, կարողացել էին մի վանականի համոզել, որ մեզ նաւակով բաց լիճը տանի: Եղած նաւակը փոքր էր. 7 հոգիս և վանականը չէինք տեղաւորուել: Իմացանք, որ պահեստի մի շոգեմակոյկ կայ ծոցի մէջ և որ վանահօր հաճութեամբ կարող ենք այն ունենալ:

Ընկերներս ինձ յանձնարարեցին գնալ վանահօր օրհնութիւնը ստանալու, ասելով որ վերջին զրոյցից և ցոյց տուած աջակցութիւններից յետոյ չի մերժի, անշուշտ, շոգենաւակը մի ժամով լիճը հանելու խնդիրը:

Եւ իրօք, Իգումեն Մավրիկիյ վանահայրը կարգադրեց, որ շոգեմակոյկ նստեցնեն մեզ և երկու ֆին նաւաստիներ ղեկավարեն մակոյկը, կատարելով մեր բոլոր խնդիրները:

— Հայի համար, հարկաւ, մեծ բաւականութիւն է Հիւսիսի «Սպիտակ գիշերի» հետո հայրենիքը անքուն երազել. — նկատեց նա մի բարի ժպիտով և վերջը ասաց. — նաւեցէք խաղաղութեամբ, և քաց թողեց:

Շոգեմակոյկի այս զիջումը փակեց իմ տեսակցութիւններէ շարքը վանածօր հետ: Հիւանդոտ ձախ աչքով և Ստանիօլաւի չքանշանով այս վանականին մենք այլ ես չենք պատահի, բայց նրան յանձնուած մենաստանի մասին դեռ ասիթներ կունենանք խօսելու:

Խոռոչի մէջ էր կապուած մենաստանի այդ շոգեմակոյկը. գերազանց մաածուծի մի գեղեցիկ մարմնացումն էր, որ զոհուեալութեան բույններ էր պարգևում մեզ: Չքեզ արտաքինով և քիչ-սուրոյով այս շոգեմակոյկը ինձ իսկոյն փոխադրում է հայրենիք, Սեանայ լիճը, որի համար վաղուց է, ինչ կրազում էի մի մակոյկ, բայց... միայն երազում էի դեռ:

Յին նաւաստիները մեր օգնութեամբ արձակում են չուանները, ժողովում են շղթաները, լսուում է անպատակ սուրջը, որ կարծես մանկան սուր ճչիւնն է տաճարի մէջ. արձագանգները երկրորդում են ամեն կողմից: Մակոյկը բաժանուում է խոռոչի հանգստարանից, ծոցն է ստնում: Արևը վաղուց մայրամուտին է մօտեցել, բայց կարծես յամառութեամբ չէր ուզում թեքուել, անյայտանալ մեզանից:

Շոգեմակոյկը տեղի ու անտեղի սուրբով պատում է անտառածածկ եզրների շուրջը. դանդաղօրէն առաջ է ընթանում ծանծաղուտների և քարերի վրայից: Նաւաստին լապտերը վառում է շոգեմակոյկի ճակատին, որի վրայ զգուած է վանականի դրօշակը շոգեմակոյկի անուան գրօշմով «Сербъ»:

— Դէպի բաց լիճ, ազաղակում ենք ամենքս, — հեռուից ենք կամենում զիտել Վալաամը, հեռուից զննել Լադօժեան լճի այս մելամաղձոտ թագուհուն, որ Ռուսաստանի առաջնակարգ մենաստաններից մէկն ունի իւր գրկում, հեռուից չափել այս մենաստանը, որ իւր ներսում կատարեալ մաքրութեամբ և կարգապահութեամբ, խելացի տնտեսութեամբ և գրականութեամբ զբաղողներին բացակայութեամբ ամբողջ օրեր իմ միտքս տանջեց և լացեցրեց՝ Սեանը յիշելիս...

Ահա մենք հեռանում ենք. շոգեմակոյկը խնդալից մի նժոյգի պէս թրթռում է մեր տակը. մենք սահում ենք, մեզ սահեցնում են այս ալիքները, որոնք շոգեմակոյկի կուրծքին են զարնուում խիզախօրէն և ցասկոտ և փրփրալից յորձանքով տեղի են տալիս նորերին և առաջ մղում մեր նաւովը, որից բաժանուելուն պէս պատկառոտ երկիւղածութեամբ տարածուում են ու սողոսկում մթնաստուէր խորչերի և ծալքերի մէջ զգտտացած և ամօթապարտ...

Մենք բաւական հեռացել ենք. արևը այլ ևս չկայ. ժամը 11 ն է: Վալաամի հանդիպակաց արևմտեան ափը, այնտեղ ուր Ֆինլանդական կեզսօլմ գաւառական քաղաքի նշաններն են երևում, նկատում ենք գունատ վերջալոյս: Ինձ չէ հրապուրում սպիտակ զի-

չերի» այս վերջալոյսը. ընկերներս հիացումի և յուզումի վայրկեաններ ևն ապրում, բայց ես անտարբեր եմ:— Մայր Մասիսի և Արագածի վերեր դոյացած վերջալոյսի մտապակեւն աւելի ուժգնօրէն է ինձ յուզում, քան հիւսիսի այս սպիտակ, աւելի ճիշտ՝ գունատ գիշերուայ անդոյն վերջալոյսը. ես տեսել եմ վերջալոյսը ամպերի հիասքանչ դասաւորումով և աներևակայելի վառ գունաւորումով: Բայց երկարատե է այս դալուկ վերջալոյսը հիւսիսի. տեղական է դալկութիւնը նրա արևմուտքի:

Մեր մակոյկը մի անգամ արդէն պտտեց 10 վերստ երկարութիւձ ունեցող Վալաամի շուրջը հեռուից, շատ հեռուից. դիտեցինք կղզու ամեն անկիւնը, խօսեցինք մտայլ անապատի և մենակեաց մարգէկանց մասին զանազան կերպ և չէինք զգում, թէ գիշեր է հանգըստի ժամ: Յին նաւաստիները մեզ հանդը պատճառելու նկատումով նորից նաւելու համաձայնութիւնը տուին. բարձրացանք աւելի հիւսիս՝ Վալաամից 30 վերստ հեռու գտնուող Սերգօթօլ քաղաքը. նաւաստիները անկարող էին մօտենալ և ես դարձանք. կէս գիշերն անց էր և լուսաւոր մթնշաղ կար միայն. խաղաղութիւն, լոսութիւն և հանդիստ էր տիրում ամենուրեք. այլ ևս չէին երևում վայրի բաղերը և սպիտակափետուր ուրուրները, որոնք այնքան խորհրդաւոր և վշտալի տեսք ունէին ցերեկը ամենի ջրի մակերևոյթի վրայ: Լճի մակերևոյթը հայելի դարձաւ, չկար ոչ ալեակ և ոչ զեփու: Մեր շոգեմակոյկը իսուլ աղմուկով առաջ էր շարժուում, տակը՝ ջուր, մթութիւն, խորութիւն, անարմատ խաւարն է թագնուած երբեմն փայլուն մակերևոյթի տակ. դիտում ես երկար, երկար, «ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիտ», ինչպէս բանաստեղծն է ասել, և մի անդիմադրելի պահանջ ես զգում ներս թափանցելու, տեսնելու, պրպըտելու և խուզարկելու այդ անարմատ խորհրդաւորութիւնը...

Շոգեմակոյկը լողում է տձև երկնակամարի տակ. համասփիւռ տարածուած ջուրն է, որ տիրում է բոլոր հորիզոններին, նրանց տակն էլ ջուր, խորունկ, հանդարտ ջուր, որ մի խորհրդաւոր ոգու պէս լռելիայն պտտում է վիհերի մէջ: Ջուր, առաջին յոնիական դպրոցի մեծ փիլիսոփան՝ Թալէսը նրան ընտրեց որպէս նիւթական մարմնացումն «ապէյրօնի», որպէս սկզբնանիւթ և սկզբնապատճառ բոլոր նիւթերի և գոյութեանց: Ջուր. մի ուրիշ իմաստասէր նրան կանացիական սկզբունքով մկրտեց, որ այրականի հետ կազմում է մի ամբողջութիւն. — օդն ու մթնոլորտը այրական տարրն էր այդ փիլիսոփայի ուսմունքի համաձայն, իսկ ջուրն՝ իրական:

Շատ շատերն են նրանով զբաղուել, շատ շատերին է նա «խելքի բերել»: Գրիգոր Արծրունին ծովի խոշոր բարերար ազդեցութիւնն էր նկատել մեծամիտ անպարկեշտ մտքերի վրայ. ով մեծ ջուր չէ



տեսել, ով ծովով չէ ճանապարհորդել, և այդ տարերքի ուժը չէ զգացել՝ նա մեծամիտ է ու ծիծաղելի իւր ազդեցութեամբ. իսկ, ընդհակառակը, ով տեսել է չարժուէն արհաւիրքը, ով զգացել է խորունկ, շատ խորունկ ու մութ ջրի գաղտնի հրապոյրը և նրա մեծութիւնը, նա հեռու է մեծամտութիւնից, պարկեշտ է և համեստ իւր գործողութիւնների մէջ: Ըշմարիտ այս դիտողութիւնը շատ մտածմունքի տեղիք տուեց, երբ ընկերներէս հաղորդեցի իմ մտորումները: Խօսեցինք երկար, մի քանի յիշողութեամբ ոտանաւորներ արտասանեցին, երգեցին. ես ասացի Հայնէից Դորբոյիւրովի ոտանգրէն թարգմանած «Вопросъ» ոտանաւորը, Ночью, надъ берегомъ дикаго моря юноша грустный стоитъ».

Բայց, ինչ էլ որ լինէր, գիշեր էր. սովորութիւններին և բնագոյին գերի մարդը անկարող է իրեն այնպէս պահել գիշերը, ինչպէս կը պահէր ցերեկը. հանգստի զեփիււր շոյում էր մեր դէմքերը և թմրութիւնը կլանում էր մեզ. զրոյցը ընդհատուում է, բարձրաձայն երազանքը դադարում, երգը լուում: Երեք ֆինները, որոնք ամառուայ գունատ գիշերների մշտական ականատեսներն էին, աւելի աշխոյժ գտնուեցին և շարունակեցին ընդհատուած զրոյցը — Դալուկ զեղին գիշերը լուսանում էր. արևելեան հորիզոնը շառագունուեց. լիճը կորցրեց իւր հայելանման երեսը, ալեակները խաղալ սկսեցին, արևի երկար և նեղ շողքը ընկաւ լճի վրայ: Սրեւածազը մօտ էր. մենք կզգու նաւահանգիստը մտանք:

Երկար էինք թափառել և հազիւ հասանք շողենաւին, որ պատրաստ կանգնած էր և հեալով շնչում էր երկու հաստ ծխնելոյզներով:

Կէս ժամ յետոյ մեկնեցինք դէպի Սերգօբօլ, չը մոռանալով բեռնաւորուել Վալամի տեսարանները ներկայացնող պատկերներով և Լադօժեան լճի գրանիտի և աւազադրանիտի նմուշներով:



*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*

2013

